

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ն. Խ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Սեպտեմբերի 30-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Թուրքիայի հայոց ամենապատիվ տ. Շնորհք սրբազան պատրիարք Գալստյանի, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի, Հեռավոր Արևելքի և Ավստրալիայի հայոց առաջնորդ տ. Գարեգին եպս. Գազանճյանի, այցելություն է տալիս Երևանում Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Խ. Հարությունյանին:

Հայոց Հայրապետին ուղեկցում էր նաև Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը:

Հայոց Հայրապետի, հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների և Հայաստանի Հանրապետության մեծահարգ պրն. նախագահի միջև տեղի է ունենում ջերմ զրույց, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը, ողջունելով Նորին գերազանցությանը, նրան է ներկայացնում Իր թանկագին հյուրերին:

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության պրն. նախագահը բարի գալուստ է մաղթում Հայոց Հայրապետին ու Նրան ընկերակցող հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներին և զրույցի ընթացքում հարգելի հյուրերին պատմում Սովետական Հայաստանի մշակութային, տնտեսական նվաճումների և մեր հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման հեռանկարների մասին:

Սույն ջերմ զրույցին մասնակցում էին նաև Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության քարտուղար Ռ. Ք. Սվետլովան, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Տ. Գասպարյանը և Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության գործերի կառավարիչ Գ. Հ. Սահակյանը: